*ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

*ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի**
**2015 թվականի հուլիսի 20-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է**
**"Գնումների մասին" ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն**

## ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ ՀԱ-ՊԸԱՊՁԲ- 02/15

Պատվիրատուն՝ «ՀԱՅԱՏՈՄ » ՓԲԸ-ն, որը գտնվում է ՀՀ, ք. Երևան, Ծովակալ Իսակովի պողոտա 50 հասցեում, ստորև ներկայացնում է ՀԱ-ՊԸԱՊՁԲ- 02/15 ծածկագրով հայտարարված պարզեցված ընթացակարգի հրավերի փոփոխության պատճառները և փոփոխությունների համառոտ նկարագրությունը:

**Փոփոխության պատճառ №1:** Հայտարարությամբ սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետը ճիշտ չի նշվել:

**Փոփոխության նկարագրություն:** Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվում սույն հրավերի փոփոխության մասին հայտարարությունը www.gnumner.am ինտերնետ կայքում հրապարակմանը հաջորդող օրվանից հետո 8-րդ աշխատանքային օրը:

Փոփոխության հիմնավորում: Հայտարարությամբ սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետը չէր համապատասխանում ՀՀ կառավարության 10.02.2011թ. №168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 86-րդ կետով սահմանված պահանջներին:

**Փոփոխության պատճառ N 2:** «Տեխնիկական միջոցներ» և «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշների գնահատման համար մասնակիցներին ներկայացվող պահանջները չեն համապատասխանում կարգի 23-րդ կետի 1-ին ենթակետի բ պարբերության պահանջներին:

**Փոփոխության նկարագրություն:** Մրցույթի հրավերից հանվում է «Տեխնիկական միջոցներ» և «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշների գնահատման համար մասնակիցներին ներկայացվող պահանջների 2-րդ ենթակետերը:

**Փոփոխության հիմնավորում:** «Տեխնիկական միջոցներ» և «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշների գնահատման համար մասնակիցներին ներկայացվող պահանջները, ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը սահմանվում են, եթե ՀՀ գործող ստանդարտների կամ նորմատիվ տեխնիկական պահանջների համաձայն տվյալ գնումը կատարելու նպատակով կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման համար պահանջվում են համապատասխան տեխնիկական միջոցներ և աշխատանքային ռեսուրսներ::

**Փոփոխության պատճառ N 3:** «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշների գնահատման կարգով անհրաժեշտ է Մրցույթի հրավերի 2-րդ մասում հստակեցնել մասնակցին ներկայացվող ֆինանսական պահանջները:

**Փոփոխության նկարագրություն:** Մրցույթի հրավերի 2-րդ մասից հանվում են 2.2.5 կետի 1-ին ենթակետը ամբողջությամբ:

**Փոփոխության հիմնավորում:** «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշների գնահատման կարգով նախատեսվել են կարգի 67-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջները, մինչդեռ Հրավերի 2-րդ մասում միաժամանակ նախատեսվել են կարգի 67-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված պահանջները:

**Փոփոխության պատճառ N 4:** Հրավերի 1-ին մասում ներառվել են 8.1.1-8.1.3 կետերը, որոնք պարունակում են ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին և առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում շտկելու կամ չշտկելու Կարգի համապատասխանաբար 51-րդ և 52-րդ կետերով սահմանված պահանջները:

**Փոփոխության նկարագրություն:** Մրցույթի հրավերի 1-ին մասից հանվում են 8.1.1-8.1.3 կետերը ամբողջությամբ:

**Փոփոխության հիմնավորում:** Կարգի 50-րդ կետի համաձայն անհրաժեշտ է հրավերում ներառել միայն 8.1.4 կետը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Տիգրան Մարգարյանին:

Հեռախոս՝ 010 722733:

Էլ. փոստ՝ armatom@web.am

Պատվիրատու՝ **«ՀԱՅԱՏՈՄ » ՓԲԸ**